

Հիվանդանոցային դպրոց - Հատուկ կրթություն - Չարգացման մանկաբուժություն
Նվաճումներ, օրինակներ, բազմամասնագիտական համագործակցություն
Սեպտեմբեր 27-28, 2013
Կոնֆերանսի հաշվետվություն

Ս/թ. սեպտեմբերի 27-28-ին Հիվանդանոցային դպրոց - հատուկ կրթություն - զարգացման մանկաբուժություն խորագրով երկօրյա կոնֆերանսը կազմակերպվել էր Անմիջական Օգնություն Անոցիացիա /ԱՕԱ/ հասարակական կազմակերպության կողմից Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ հետ համատեղ: Կոնֆերանսը կազմակերպվել էր Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոցի և Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ համագործակցության ծրագրի աջակցությամբ և տեղի ունեցավ Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ կոնֆերանս դահլիճում:

Կոնֆերանսի **նպատակն** էր.

- Մասնակիցներին ուշադրությունը հրավիրել հնարավոր բազմամասնագիտական համագործակցությանը հոգուտ երեխայի, որպեսզի հնարավոր լինի ավելի արդյունավետ օգնել տարբեր կարիքներ ունեցող երեխային: Ցուցադրել գործող օրինակներ:
- Ստեղծել աշխատանքային միջուկ խումբ, որը կնպաստի երեխայի հետ աշխատող տարբեր մասնագետների միջև հնարավոր համագործակցության զարգացմանը:

Կոնֆերանսի աշխատանքային ժամերը 11.00-17.00 էին՝ մեկ ժամ ընդմիջումով 13.00-14.00: Երկու օրերի առաջին կեսին ներկայացվեցին տարբեր զեկուլյցներ տեղական հաստատությունների կրթական, բժշկական և գնահատման ոլորտի մասնագետների կողմից: Երկրորդ կեսին անց կացվեցին քննարկումներ բազմամասնագիտական թիմերի, թիմերի ներսում և դրանցից դուրս ոլորտում աշխատող և հատուկ կարիքներ ունեցող երեխային ծառայություններ մատուցող մասնագետների հետ համագործակցության հմտությունների և մոդելների վերաբերյալ: Ցուցադրվեցին և քննարկվեցին համագործակցության հնարավոր մոդելներ և գործող ձևեր /Հատուկ մանկավարժների ակումբը որպես հարթակ քննարկումների, փորձի փոխանակման և գործանական դասընթացների համար/: Քննարկումների կիզակետը հատուկ կարիքներ ունեցող երեխայի նկատմամբ բազմամասնագիտական մոտեցումն էր և երեխայի լավագույն շահը /կոնֆերանսի ծրագիրը և քննարկումների արդյունքները հասանելի են ըստ պահանջի/:

Կոնֆերանսին մասնակցում էին հատուկ մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, լոգոպեդներ, բժիշկներ: Մասնակիցները ներկայացնում էին հատուկ և ներառական դպրոցներ, տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ, առողջապահական և կրթական այլ հաստատություններ /մասնակիցների ցուցակը հասանելի է ըստ պահանջի/:

Կոնֆերանսի ավարտին մասնակիցները լրացրեցին հարցաթերթիկներ, որի արդյունքները թույլ են տալիս հաստատել, որ կոնֆերանսը հաջողվել է:

Որպես կոնֆերանսի 3 կարևոր արդյունք հարկ ենք համարում նշել հետևյալը.

- ԱՕԱ-ն մի շարք գործնական դասընթացներ կկազմակերպի կոնֆերանսի մասնակիցների համար
- Հատուկ կարիքներ ունեցող երեխայի հետ աշխատող մասնագետների մի ցանց կստեղծվի: Առ այժմ սա Երևանում և ՀՀ մարզերում գործող ոլորտի տարբեր հաստատությունների և մասնագետների ցանկ է: Այս ցանկը հետագայում կվերանայվի, կլրացվի նաև գոյություն ունեցող այլ ռեսուրսների մասին տեղեկություններով և ի վերջո կդառնա իրական համագործակցության ցանց:
- ԱՕԱ-ն կնախաձեռնի 6-8 մասնագետներից բաղկացած աշխատանքային միջուկ խմբի ստեղծումը: Խումբի հավանական ներկայացուցիչներն են ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ, ԲԳԿ ներկայացուցիչ, հոգեկան առողջության մասնագետ /հոգեբույժ/, դեռահասների բժիշկ, հասարակական կազմակերպության ներկայացուցիչ:

ԱՕԱ նախագահ

Հասմիկ Թադևոսյան

ԱՕԱ գործադիր տնօրեն

Լիանա Սանամյան